

անոր երկաթամած կամ փայտեղէն «հաստահեղոյս բեւեռապինդ» (Արծ. 330) ըստուար դուռն իսկոյն կը շաչէ ու կը ճոնչէ «սլանապանին» բանալեաց ներքեւ, կը բացուի (Մամ. 24), եւ մեր շքեղ բուրումնաւէտ հրաւիրեալք ներս կը մտնեն:

12. Ընդունկերտրիւն: — Հայ բարուց մէջ, ինչպէս եւ այլոց, սովորական էր հեռագնաց եկաւորաց «ընդ առաջ» երթալ. ինչպէս երբ հայրապետք ձեռնադրութեամբ կը դառնային կեսարիայէն (Ազթ. 615. Փաւս. 30, 73), կամ գաւառի մ'այցելութեան կ'երթային (Որբ. 53), կամ երբ Ս. Մեսրոբ նորագիւտ տառերով կը դառնար (Կոր. 11), կամ Վահան կու գար Պարսկաստանէն (Փրպ. 539): Կրնանք ուրեմն ենթադրել՝ որ կոչնատէրն ալ իւր տան մէջ ընդ առաջ կ'ելնէր նորեկ հիւրոց: Եւ բնական է որ ողջունէին զիրար սովորական բանաձեւերով, հրաւիրեալն ըսելով ընթրատուին՝ «Ողջոյն ընդ քեզ» (Յհ. Ի, 19, 21¹. Քրզ. ամբ. 739), կամ «Ողջ եր»², յարելով անշուշտ «պատուոյն անունն» ալ, զոր օրինակ՝ «Սլանեա՛ց տեր»

1. Յն. «Խաղաղութիւն ձեզ»: — 2. «Ողջ եր, վարդապետ», կամ «Ողջ եր, թագաւոր Հրէից». յն. Ուրախացիր (Մտթ. ԻԶ, 49. ԻԷ, 29). Յոգն. «Ողջ էք». յն. Ուրախացէք (Մտթ. ԻԶ, 49):